Փոխանորդն Յունաց. Հայք օրինաւոր ոչ դատին ըղ-
պատասխանիս մեր, և թէ չինուածքն աւարտեալ են նախ
քան զթուական հրովարտակին. այլ զի մեզ յանձնեալ է
ընդհանուր նորոգութիւնն, որոյ վասն խնդրեմք վաւերումն
չինուածոց, որք ամբոխեալ կրիւք ասեն թէ հակառակ
վարին հրովարտակին, և զի յիշեալ է 'ի նմին թէ ջնջեցան
երեքին հրովարտակք Հայոց. բառդ ջնջեալ՝ նշանակէ ի-
մաստիւք նոցին չինեալ իրաց խափանումն, և բառդ այ-
սուհետեւ՝ եթէ միայն վասն ապառնի ժամանակի լինէր,
չէր հարկ ջնջումն հրովարտակաց, այլ զի կան տակաւին
կանգուն չինուածքն, պարտ է կործանել։ Հայք յեցեալ են
'ի բառն այսուհետեւ, և ոչ ակնարկեն 'ի ջնջումն հրովար-
տակաց իւրեանց, զի յորմէ խուսաբեն՝ 'ի նոյն ըմբռնին։
Եւ հրամանագիրն վասն դատին Լատինաց է, եւ ոչ կարէ
խափանել զգործադրութիւն հրովարտակին։

Հաֆիզ Բաշիտ Էֆէնտի. Բովանդակ չինութիւնք լերին
Զիթենեաց՝ կանխագոյն է քան զթուական հրովարտակին
Յունաց, և Հայք ասեն՝ թէպէտև նորոգութիւնն յանձնեալ է
Յունաց, այլ այն այսուհետեւ է, և ոչ վասն անցեալ և ներ-
կայ ժամանակաց։ Յոյնք պնդեն թէ ջնջեալ են հրովար-
տակքն, խափանեալ են եւ չինուածքն, եւ թախանձեն
զկործանումն նոցին. այդ կախեալ է 'ի հրամանէ և 'ի կա-
մաց մեծի Տէրութեան, ուստի չէ հարկ երկուց կողմանց
կուտակութեամբ բառից վէճս յարուցանել 'ի կորուստ
ժամանակին։ Յետ այսր՝ հարցումն ուղղեաց առ Փոխա-
նորդն Յունաց և ասէ, բացայայտ գրեալ է 'ի նամակին
զոր գրեցիք առ հիւպատոսն Ռուսաց, որ ասա մատուցաւ
յոտս նորին Բարձրութեան Փոխարքային Եգիպտոսի, թէ
վասն ոչ գործադրելոյ զհրովարտակն ձեր Համոուլլահ
Դատաւորն Երուսաղէմի, պատեհ ժամանակ գտեալ Հայոց
զարդարեցին զեկեղեցին Բեթղեհէմի և չինեցին վանս 'ի
լեառն Զիթենեաց։ Եւ 'ի քննութենէս յայտմանէ յայտնի
եղեւ թէ՝ բովանդակ իրքն լեալ են 'ի ժամանակս Օմար
Նասիպ Դատաւորի, եւ ամբաստանեալ Համոուլլահ Դա-
տաւորն չունի ինչ տեղեկութիւն 'ի նոցանէ, եւ եղեալ
իրքն նախ քան զհրովարտակն ձեր է, յորում՝ ոչ են ընդ-
դիմացեալ Հայք, և գործն Բեթղեհէմի բաղկանայ մի միայն